

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Միջազգային պրակտիկայում առկա արտաքին տնտեսական կապերի մաքսային կարգավորման մեթոդական հետազոտություններից հետևում է, որ թեև ապրանքների և ծառայությունների, աշխատուժի և կապիտալի ազատ տեղաշարժը հանգեցնում են ռեսուրսների օգտագործման և արտադրողականության արդյունավետության բարձրացմանը, այնուամենայնիվ, ազգային-պետական շահերով պայմանավորված համաշխարհային տնտեսությունում առկա է արտաքին տնտեսական կապերի կարգավորման ակտիվ միտում, որի պայմաններում պետության կողմից արտաքին տնտեսական կապերի կարգավորումը և կարգավորման սկզբունքների ու մակարդակի ընտրությունը, մասնավորապես վերջինիս ապահովման համար առավել ազդեցիկ մաքսային քաղաքականության իրականացումը դառնում է անհրաժեշտություն ու հրատապ սոցիալ-տնտեսական հիմնախնդիր:

Անցումային շրջանում Հայաստանի Հանրապետության տնտեսական դիրքը համաշխարհային շուկայում ամրապնդելու, աշխատանքի միջազգային բաժանման մասնակցությունը արմատավորելու, ներտնտեսական հիմնախնդիրները կարգավորելու նպատակով Հայաստանի Հանրապետության առջև ծառայել է վարվող համընդհանուր տնտեսական քաղաքականությանը ներդաշնակ արտաքին տնտեսական կապերի կարգավորման ժամանակակից համակարգի ներդրման անհրաժեշտություն:

Նախկին ԽՍՀՄ կառավարման պլանային համակարգի կազմալուծմամբ, ԽՍՀՄ տնտեսական կապերի ապահովման համակարգի կազմալուծմամբ, ավանդական շուկաների ապաձեւավորմամբ պայմանավորված, 1992 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ եղավ լիովին նոր և ինքնուրույն արտաքին տնտեսական կապերի մաքսային կարգավորման իրականացմանը, որը

մասնավորապես արտահայտվեց 1992թ. Հայաստանի Հանրապետության մաքսային համակարգի հիմնադրմամբ, մաքսային օրենսդրության եւ կարգավորիչ այլ իրավական ակտերի ձեւավորմամբ, ԱՊՀ շրջանակներում տնտեսական ինտեգրացիոն գործընթացների ձեռնարկմամբ եւ այլն:

90-ականների սկզբներին հանդիսանալով նորանկախ հանրապետություն, գտնվելով տնտեսական շրջափակման մեջ, սեփական բյուջեն համալրելու խնդիրներով պարտավորված, Հայաստանի Հանրապետության մաքսային քաղաքականությունը չկարողացավ բավարար հիմք հանդիսանալ Հայաստանի Հանրապետության համար տնտեսական մի շարք հիմնախնդիրների կարգավորման համար, եւ արդյունքում, արտաքին տնտեսական կապերի մաքսային կարգավորման համակարգում դեռեւս գոյություն ունեցող մի շարք բացթողումներով պայմանավորված, Հայաստանի Հանրապետությունում առկա է արտաքին առեւտրային հաշվեկշռի բացասական սալդո՝ 584200 հազ. ԱՄՆ դոլար, տնտեսության գերբացվածության աստիճան՝ ներմուծման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմում է 46.4 տոկոս, արտահանման 15.7 տոկոսի պայմաններում, օտարերկրյա ուղղակի ներդրումների նվազման միտում՝ 14.5 տոկոս¹, ինչպես նաեւ իրական տնտեսական աճի ցածր մակարդակ, ոչ արդար մրցակցային դաշտ, աշխատանքի համաշխարհային բաժանման մասնակցության նվազ տեմպ, տնտեսական ինտեգրացիոն գործընթացների մասնակցության ռազմավարության բացակայություն եւ այլն:

Արտաքին տնտեսական կապերի մաքսային կարգավորման սկզբունքների տեսամեթոդական ուսումնասիրությունները, Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրության, մաքսային գործի կառավարման համակարգի հետազոտությունները, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ցուցանիշների վրա մաքսային քաղաքականության ներգործության վերլուծությունը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերի մաքսային կարգավորման համակարգում առկա հետեւյալ հիմնախնդիրների բացահայտմանն ու վերջիններիս

¹ Աղբյուրը՝ ԳԳ տնտեսական միտումներ. 2001 թ. հունվար-մարտ, էջ 164, 165:

բարեփոխումներին ուղղված առաջարկությունների ձեւավորմանը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության ներքին օղակի կարգավորման վերլուծության համադրումը համաշխարհային տնտեսությունում առկա միտումների հետ հանգեցնում է այն հետեւության, որ Հայաստանի Հանրապետությունում առկա է գյուղատնտեսության ոլորտի մաքսային քաղաքականության սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման ոչ լիարժեք եւ միջազգային նորմերին ու սկզբունքներին ոչ ներդաշնակ պաշտպանության մակարդակ, որի հետեւանքով վերջին տարիներին առկա է համախառն գյուղատնտեսական արտադրանքի անկման միտում, որը մասնավորապես 1999 թվականին 1998 թվականի համեմատությամբ նվազել է 23 տոկոսով, 2000 թվականին 1999 թվականի համեմատությամբ՝ 10 տոկոսով, ընդ որում 2000 թվականին 281.2 մլրդ. դրամ գյուղատնտեսական համախառն արտադրանքը կազմել է 1998-2000 թվականների համախառն միջին գյուղատնտեսական արտադրանքի՝ 331.4 մլրդ. դրամի 84 տոկոսը¹: Միաժամանակ հարկ է նաեւ նշել, որ անցումային տնտեսություններում գյուղատնտեսության ոլորտի վրա համաշխարհային ինտեգրացիայի ակտիվացման պայմաններում առկա հետեւանքների միջազգային փորձի ուսումնասիրությունը հանգեցնում է վերջինիս էլ ավելի վատթարացման մտավախության: Կարելի էրելով գյուղատնտեսության դերը պետության տնտեսական-ազգային անվտանգության մեջ, ինչպես նաեւ հաշվի առնելով միջազգային պրակտիկայում առկա գյուղատնտեսության սուբսիդավորման ու հովանավորչության միտումները, անհրաժեշտ է սահմանել գյուղատնտեսական արտադրանքի ներմուծման մաքսատուրքերի բարձր դրույքաչափեր, ընդհուպ եթե մնան մաքսատուրքերը կունենան ներմուծման արգելող էֆեկտ: Որոշ մասնագետների այն կարծիքը, որ գյուղատնտեսության ոլորտը ներքին՝ ուղղակի եւ անուղղակի հարկերի արտոնությունների պայմաններում բավականին պաշտպանված է եւ այն մտավախությունը, որ գյուղատնտեսական արտադրությունը բարձր մաքսատուրքերով պաշտպանելու արդյունքում կարող է դառնալ

¹ Սղբյուրը՝ ՀՀ տնտեսական միտումներ. 2001թ. հունվար-մարտ. էջ 24:

անարդյունավետ, այստեղ տեղին չէ, քանի որ նման հարկային արտոնություններ են տրամադրվում աշխարհի գրեթե բոլոր զարգացած եւ զարգացող պետություններում, ուստի եւ Հայաստանի Հանրապետությունում նման արտոնությունների տրամադրումը չի ենթադրում առավել բարենպաստ պայմաններ, իսկ ինչ վերաբերվում է գյուղատնտեսության ոլորտում հնարավոր տնտեսական անարդյունավետության ձեւավորմանը, հարկ է նշել, որ շնորհիվ գյուղատնտեսության ոլորտում առկա մրցակցային պայմանների եւ մենաշնորհների բացակայության, ներքին մրցակցությունը ինքնին կհանգեցնի ռեսուրսների օգտագործման արդյունավետության եւ վատագույն դեպքում տնտեսական կորուստը կարող է լինել արտադրության անարդյունավետությունը միջազգային արտադրության համեմատ: Սակայն կարելի էր վստահ լինել, որ գյուղատնտեսության դերը պետության ինքնիշխանության, անվտանգության համակարգում, հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման սոցիալ-տնտեսական արդյունքը կարող է կշռադատել հնարավոր տնտեսական կորուստները: Գյուղատնտեսության ոլորտի պաշտպանության նպատակով անհրաժեշտություն է առաջանում նաեւ Հայաստանի Հանրապետությունից էժանագին գյուղատնտեսական ապրանքների արտահանման ժամանակ զանծվող մաքսավճարների համակարգի վերանայում, վերջիններիս մաքսային սահմանով տեղափոխման ժամանակ առավել մեղմ դրույքաչափով հաստատագրված վճարի սահմանման նպատակով: Մասնավորապես Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով սահմանված մաքսավճարի դրույքաչափը, որը միջին հաշվով կազմում է արտահանվող 1 տոննա ապրանքի համար 8500 դրամ, որոշ էժանագին գյուղատնտեսական ապրանքների սեզոնային արտահանումների ժամանակ կազմելով այդ ապրանքների 15-20 տոկոսը, ունենում են արտահանման մաքսատուրքի արգելող էֆեկտ եւ խոչընդոտում վերոնշյալ ապրանքների արտահանումը:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող մաքսային քաղաքականության սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման համակարգի բարեփոխումների շրջանակում հարկ է նշել, որ որոշ

սկզբունքներ, պայմանավորված ապրանքների արտադրության համար անհրաժեշտ մասշտաբի էֆեկտով, ֆիզիկական տվյալներով, վերանայման կարիք ունեն, որոնց կիրառությունը հնարավորություն կընծեռնի ներքին տնտեսությունում ապահովել արդար մրցակցային դաշտ, արտահանման եւ ներմուծման գործընթացներում իրականացնել հնարավոր գերշահույթի հարկմանն ուղղված միջոցառումներ, նպաստել Հայաստանի Հանրապետության ներքին արտադրության եւ արտահանման խթանմանը: Մասնավորապես վերոնշյալ սկզբունքների շրջանակը հետեւյալն է:

▪ Ներքին շուկայում արտադրվող այնպիսի ապրանքների, որոնց միջազգայնորեն ընդունված նորմերի համաձայն անհրաժեշտություն չկա մասշտաբի էֆեկտի, այսինքն՝ թեթեւ սննդի արդյունաբերության ապրանքներ, տեքստիլ եւ տրիկոտաժե ապրանքներ, նպատակահարմար է սահմանել ներմուծման մաքսատուրքերի բարձր դրույքաչափեր, հետզհետե իջեցնելու պայմանով: Այստեղ ընդհանրապես վերանում է հեռանկարային հատվածում ներքին արտադրության անարդյունավետության հնարավորությունը, մասնավորապես մենաշնորհներ զոյանալու անհնարինության պայմաններում սկզբնական շրջանում ներքին մրցակցությունը, հետագայում նաեւ մաքսատուրքերի վերացման դեպքում միջազգային մրցակցությունը հնարավորություն կտա ապահովել այդ արտադրությունների արդյունավետությունը, որը, ընդ որում, կարող է հանդիսանալ նաեւ վերոնշյալ ապրանքների արտահանման խթանման նախապայման:

▪ Այնպիսի ապրանքների համար, որոնց ներքին շուկայական գինը միջազգային գներից անհամեմատ ցածր է՝ պայմանավորված տնտեսության ոչ բարենպաստ վիճակով եւ նշված ապրանքների նկատմամբ ներքին պահանջարկի բացակայությամբ, ընդ որում այդ ապրանքների արտահանման դեպքում զնորդը մոնոպսոնիստ է, անհրաժեշտ է սահմանել արտահանման մաքսատուրքերի դրույքաչափեր, այդ ապրանքների միջազգային գնի եւ ներքին շուկայի գնի տարբերության չափով: Մասնավորապես 90-ականներին Հայաստանի Հանրապետությունից Իրանի Իսլամական Հանրապետություն՝ Հայաստանի Հանրապետությունում չարտադրված սեւ մետաղի եւ մետաղի ջարդոնի արտահանման դեպքում

Իրանական կողմը, ի դեմս Իրանի Իսլամական Հանրապետության, հանդիսանում էր մոնոպսոնիստ: Պայմանավորված կոնկրետ ապրանքի, սովյալ դեպքում մետաղի ֆիզիկական հատկանիշներով, այդ ապրանքի տրանսպորտային փոխադրումը արդյունավետ չէ, այսինքն նման ապրանքների դեպքում որպես արդյունավետ իրացման շուկաներ կարող են հանդիսանալ պետության հարեւան պետությունները: Սակայն պայմանավորված Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքով Հայաստանը իր հարեւան պետություններից Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ չունի զարգացած արտաքին առեւտրային հարաբերություններ, Վրաստանը գտնվում էր տնտեսական նույն վիճակում, ինչ որ Հայաստանի Հանրապետությունը եւ այստեղ արտահանման միակ գործընկերը մնում էր Իրանի Իսլամական Հանրապետությունը: Մինչդեռ Իրանի Իսլամական Հանրապետությունը, հանդիսանալով պրոտտեկցիոնիստական արտաքին առեւտրային քաղաքականություն որդեգրած պետություն, ներմուծման գործարքների նկատմամբ իրականացնում է խիստ վերահսկողություն եւ լիցենզավորում: Այսինք 90-ական թվականների Հայաստանի Հանրապետությունից մետաղի արտահանման ժամանակ Իրան մետաղ արտահանողները ոչ մրցակցային պայմաններում Հայաստանի Հանրապետությունից ձեռք էին բերում երկաթի ջարդոնը եւ հանդիսանալով մոնոպսոնիստներ, ստանում գերշահույթ:

Ի լրումն սակագնային կարգավորման ոլորտում վերոնշյալ սկզբունքների կիրառման անհրաժեշտության հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում մաքսային քաղաքականության սակագնային կարգավորումը չի ընդգրկում տնտեսության ողջ օղակը, մասնավորապես ծառայությունների ոլորտը, որով պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում ծառայությունների ոլորտի ոչ բավարար եւ անհրաժեշտ պաշտպանության բացակայությունը հանգեցնում է վերջինիս շրջանակներում սովերի ձեւավորմանը: Մասնավորապես սակագնային կարգավորման ոլորտում, հաշվի առնելով համաշխարհային փորձն ու պրակտիկան, անհրաժեշտ է կարգավորման դաշտում ներառել նաեւ Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծվող

ծառայությունները, մասնավորապես ռադիո եւ հեռուստատեսային հեռարձակումները: Առկա պայմաններում նշված ծառայությունների ներմուծումը կարգավորվում է համապատասխան թույլտվություններով, եւ այդ ծառայություններ ներմուծողները, ցածր ինքնարժեքով պայմանավորված, հնարավորություն են ունենում անհամեմատ ցածր գներով նշված հեռարձակումներում տեղադրել գովազդային բլոկներ, անհավասար պայմաններ ստեղծելով ներքին շուկայում նշված գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների համար: Վերոնշյալի նպատակով, ինչպես նաեւ ակնկալելով բյուջետային որոշ մաքսային մուտքեր, նպատակահարմար է այդ ծառայությունների ներմուծման համար սահմանել մաքսատուրքեր, որոնց հաշվարկման հիմքում որպես մաքսային արժեք կարելի է ընդունել այն գումարի չափը, որը վճարում են ներմուծողները այդ ծառայությունները իրացնողներին, հեռարձակումների ընթացքում գովազդային բլոկներ տեղադրելու թույլտվության համար:

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրության բարեփոխումների շրջանակներում հարկ է նշել, որ մաքսային օրենսդրության շուրջ տասնամյա ձեւավորման գործընթացում, ի թիվս մի շարք ձեռքբերումների եւ բարեփոխումների, առկա են մի շարք օրենսդրական բացթողումներ, որոնց առկայությունը հանգեցնում է մաքսային քաղաքականության իրականացման անարդյունավետությանը, տնտեսվարող սուբյեկտների շահերի ուսուհարմանը, պետական բյուջեի հարկային եւ մաքսային մուտքերի հնարավոր կորստի: Մասնավորապես մաքսային ոլորտը կարգավորող հիմնական օրենքում՝ մաքսային օրենսգրքում, մի շարք սահմանումներ հստակ չեն, որոնք հանգեցնում են նպատակային մաքսային կարգավորման անարդյունավետության, ինչպես նաեւ մաքսային օրենսգրքի որոշ դրույթների եւ Հայաստանի Հանրապետության տնտեսական ոլորտը կարգավորող օրենսդրության միջեւ առկա մի շարք անհամապատասխանությունները կարող են հանգեցնել անկանխատեսելի հետեւանքների, որոնցից առավել բացասականը կարող է լինել տնտեսվարող սուբյեկտների կողմից պետական բյուջեից ներքին շրջանառության անուղղակի հարկերի հետստացումը:

Մասնավորապես Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 26 հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն «վերաներմուծում» ռեժիմը կարգավորում է Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից «ժամանակավոր արտահանում վերամշակման համար», «ժամանակավոր արտահանում» ռեժիմներով արտահանված ապրանքների եւ «արտահանում ազատ շրջանառության համար» ռեժիմով արտահանված Հայաստանի Հանրապետության ծագման ապրանքների հետադարձ ներմուծումը Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք, ընդ որում մաքսային այս ռեժիմի շրջանակներում գանձվում են միայն մաքսավճարներ, օրենքով այլ բան սահմանված չլինելու դեպքում: Մինչդեռ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին կետի համաձայն «Արտահանում ազատ շրջանառության համար մաքսային ռեժիմով տեղափոխվող ապրանքների նկատմամբ կիրառվում, է ավելացված արժեքի հարկի 0-ական դրույքաչափ, այսինքն ետ է վերադարձվում կամ հաշվանցվում է ավելացված արժեքի հարկի համար գանձված գումարները, ինչպես նաեւ «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6 հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի եւ 9 հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն համապատասխանաբար՝ ակցիզային հարկով չեն հարկվում Հայաստանի Հանրապետությունից ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտահանումը, եթե առկա է մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով լրացված բեռնամաքսային հայտարարագրի պատճեն՝ «Բացթողումը թույլատրված է»: Այսինքն վերոնշյալից հետեւում է, որ ապրանքը հնարավոր է արտահանել «արտահանում ազատ շրջանառության» ռեժիմով հարեւան որեւէ պետություն, հետ վերցնել ավելացված արժեքի հարկը, այնտեղ ձեւակերպել ժամանակավոր ներմուծում, որպեսզի մաքսային վճարների առումով, բացառությամբ մաքսավճարի պարտավորություններ չառաջանան, այնուհետեւ ձեւակերպել վերաարտահանում եւ Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծելիս ձեւակերպել վերաներմուծում, որի դեպքում կգանձվի միայն մաքսավճար, այնուհետեւ այդ ապրանքները իրացնել տոնավաճառներում: Վերոնշյալ միջոցառումների շնորհիվ ավելացված արժեքի հարկի եւ ակցիզային հարկի շրջանցումը առավել ձեռնատու է

քաղաքացիներին եւ այն կազմակերպություններին, որոնց կողմից իրականացվող հիմնական գործունեությունը ավելացված արժեքի հարկով չի հարկվում: Այսինքն եթե փորձենք հաշվարկել պետական բյուջեի հարկային այն կորուստները, որոնք կարող են առաջանալ տնտեսվարող սուբյեկտների կողմից վերոնշյալ մեխանիզմով ավելացված արժեքի ետ ստացման եւ ակցիզային հարկի չվճարման հետեւանքով, նման կորուստի սահմանը կարող է ներառել ներքին շրջանառությունից զանձվող ավելացված արժեքի եւ ակցիզային հարկի ամբողջ ծավալը: Վերոնշյալ մեխանիզմով ավելացված արժեքի հարկման շրջանցումը բացառելու նպատակով անհրաժեշտ է մաքսային օրենսգրքի 26 հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետը լրացնել հետեւյալ արտահայտությամբ,

▪ ինչպես նաեւ «արտահանում ազատ շրջանառության համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերաներմուծման դեպքի, որոնց ներմուծման դեպքում զանձվում են մաքսային վճարներ:

Հայաստանի Հանրապետության մաքսային գործի կառավարման համակարգի բարեփոխումների շրջանակում հարկ է նշել, որ առկա պայմաններում վերջինս ներդաշնակ չէ վարվող սակագնային եւ ոչ սակագնային կարգավորմանը: Մասնավորապես մաքսային համակարգի տեխնիկական զինվածության անհրաժեշտ մակարդակի բացակայության պայմաններում մաքսային հսկողության անարդյունավետությունը եւ անկատարությունը հնարավորություն չի ընձեռնում իրականացնել սակագնային եւ ոչ սակագնային նպատակային կարգավորում, եւ արդյունքում հանգեցնում է ներքին շուկայում արդար մրցակցային դաշտի ձեւավորման անհնարինության, սպառողների շահերի ոտնահարման, բյուջեի մաքսային մուտքերի կորուստի եւ այլն:

Մասնավորապես մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացման, մաքսային գործի կառավարման համակարգում առկա խնդիրների լուծման, մաքսային գործի արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է.

▪ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից իրականացվող մաքսային հսկողության արդյունավետության բարձրացման

նպատակով Հայաստանի Հանրապետության մաքսակետերը ապահովել տեխնիկական զինվածությամբ.

- Սահմանային անցումային մաքսային կետերում ներդնել «կանաչ» եւ «կարմիր» ուղիների համակարգ.

- Բոլոր մաքսակետերում եւ մաքսատներում բեռների 100 տոկոսանոց զննման համակարգի փոխարեն ռիսկի կառավարման կամ ընտրողականության համակարգի ներդրում, որը առկա պայմաններում գործում է միայն Արարատյան տարածաշրջանի մաքսատանը.

- Մաքսակետերի եւ մաքսատների միջեւ լայն տեղեկատվական ցանցի ներդրում, որը հնարավորություն կտա ինֆորմացիայի տարածումը մաքսակետերի, մաքսատների եւ մաքսային վարչության կենտրոնական ապարատի միջեւ.

- Համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում, որը հնարավորություն կտա ֆիզիկական անձանց օրենսդրությամբ տրամադրված արտոնության վերահսկողությունը.

Ի լրումն վերոնշյալ հիմնախնդրի կարգավորման կարելության հարկ է նշել, որ վերջինս առավել իրատեսական է «Բազրատաշենի» սահմանամերձ առևտրի շուկայի առկայության պայմաններում: Մասնավորապես 1999-2000 թթ. կատարված համապատասխան վերլուծությունների արդյունքում պարզվել է, որ Բազրատաշենի շուկան, ֆիզիկական անձանց օրենսդրությամբ տրամադրված արտոնության վերահսկողության բացակայության հետևանքով, օրական կարող է ենթադրել բյուջեի մաքսային վճարների 37500 ԱՄՆ դոլարին համարժեք կորուստ: Սակայն այս կորուստը այն հիմնական վնասը չէ, որ հասցնում է Բազրատաշենի շուկան: Մասնավորապես ըստ վերոնշյալ վերլուծությունների, քաղաքացիների կողմից արտոնյալ պայմաններում օրական ներմուծվում է 150000 ԱՄՆ դոլարին համարժեք ապրանքներ: Այսինքն կարճաժամկետ հատվածում, համաշխարհային շուկա նոր մուտք գործած եւ պիտանելիության կարճ ժամանակ ունեցող ապրանքների դեպքում, երբ նշված ապրանքը ներմուծվում է իրավաբանական անձի կողմից կամ արտոնությունից չօգտվող քաղաքացիների կողմից, նշված անձանց համար տնտեսական կորուստը կարող է կազմել այդ ապրանքաշրջանառության ամբողջ ծավալը:

Հայաստանի Հանրապետության մաքսային քաղաքականության եւ վարող արտաքին առեւտրային քաղաքականության համադրման շրջանակներում հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության արտաքին առեւտրային քաղաքականության առկա որոշ թերությունները խոչընդոտում են մաքսային քաղաքականության իրականացման արդյունավետությունը, որոնց կարգավորման նպատակով, արտաքին առեւտրի կառավարման ողջ գործընթացում անհրաժեշտ է մաքսային քաղաքականության ներդաշնակ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հետեւյալ միջոցառումների իրականացումը, որոնք առկա պայմաններում կիրառվում են մի շարք զարգացած պետություններում.

- Հայաստանի Հանրապետությունից ապրանքների արտահանումը խրախուսելու նպատակով անհրաժեշտ է պետական անմիջական մասնակցությամբ կազմակերպել տնտեսվարող սուբյեկտների, ձեռնարկատերերի հետ տեղեկատվական խորհրդակցություններ, որի արդյունքում տնտեսվարող սուբյեկտներին կժանոթացվի արտահանման շուկաների, արտահանման նշանակման վայր հանդիսացող պետությունների մաքսային, հարկային եւ արտաքին առեւտրային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի հետ: Մասնավորապես այս գործընթացում առավել կարելու է տնտեսվարող սուբյեկտներին ծանոթացնել նաեւ Հայաստանի Հանրապետության հետ արտոնյալ մաքսատուրքերի պայմաններում արտաքին առեւտուր իրականացնող պետությունների համապատասխան համաձայնագրերի հետ, քանի որ ի տարբերություն ներքին հարկային եւ մաքսային օրենսդրության, նշված համաձայնագրերը քիչ հրապարակային են եւ հնարավորություն չեն ընձեռնում տնտեսվարող սուբյեկտներին լիարժեք օգտագործել վերջիններովս ընձեռնված մաքսային արտոնությունները:

- Վարվող սակագնային եւ ոչ սակագնային քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ապահովել համապատասխան մեխանիզմներ ուղղված հակամենաշնորհային տնտեսության ձեւավորմանը:

- Ձեռնարկել միջոցառումներ, ուղղված արտահանման ռիսկի պետական ապահովագրության համակարգի ներդրմանը, որը շնորհիվ պետության

կողմից արտահանման գործընթացում դժբախտ պատահանքների ռիսկի, զնորդների կողմից ապրանքների համար չվճարման ռիսկի, արտարժույթի հնարավոր փոփոխություններից կրվող ռիսկի եւ համանման այլ ռիսկերի ապահովագրման դրականորեն կանդրադառնա արտահանման ռազմավարության վրա:

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային շուկայում մրցունակ ապրանք ապահովելու համար, ի թիվս որակյալ աշխատանքային ռեսուրսների, տնտեսական ներուժի, տնտեսության աճի տեմպի, աշխատանքային ռեսուրսների հագեցվածության, անհրաժեշտ պայմաններից է հանդիսանում պետության գիտության եւ տեխնիկայի զարգացածության մակարդակը, անհրաժեշտություն է պետական բյուջեից գիտությանն ուղղվող ֆինանսավորման մեծացումը:

- Կարելի է ազատ տնտեսական գոտիների ազդեցությունը օտարերկրյա ներդրումների ներգրավման, արտահանման ծավալների մեծացման վրա, նպատակահարմար է չսահմանափակվելով անմաքս առևտրի խանութներով եւ ազատ մաքսային պահեստներով, ձեռնարկել միջոցառումներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետությունում ազատ տնտեսական գոտիների՝ մասնավորապես ազատ արդյունաբերական-արտադրական գոտիների, տեխնոպարկերի ստեղծմանը: